Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
մայիսի 5-ի N 608 - Ն որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎՏԱՆԳԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀՍԿՄԱՆ՝ ՎԱՎԿԿՀ (HACCP) ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետը | Պատասխանատու կատարողը | Արդյունքը |
|---|---|---|---|---|
| 1. | ՎԱՎԿԿՀ (HACCP) համակարգի ներդրման կարիքների մոնիթորինգ իրականացնող աշխատանքային խմբի ձևավորում | մինչև 2011թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն | Կձևավորվի ՀՀ կառավարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, <<Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն>> հիմնադրամի (CARD) և Հիգիենիկ ինժիներիայի և դիզայնի եվրոպական խմբի հայաստանյան մասնաճյուղի՝ ձկնաբուծական մթերքների արտադրության ոլորտում ՎԱՎԿԿՀ (HACCP) համակարգի ներդրման աջակցության գործում անհրաժեշտ կարողություններ ունեցող մասնագետներից կազմված աշխատանքային խումբ: |
| 2. | Աշխատանքային խմբի կողմից ձկնաբուծական մթերքներ արտադրող ձեռնարկություններում ՎԱՎԿԿՀ (HACCP) համակարգի ներդրման կարիքների մոնիթորինգի իրականացում, միջոցառումների ծրագրերի մշակում և համակարգի ներդրման համար անհրաժեշտ ծախսերի հաշվարկում | մինչև 2011թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն | 1. Յուրաքանչյուր ձեռնարկությունում 10-15-օրյա ժամկետում կիրականացվի ՎԱՎԿԿՀ (HACCP) համակարգի ներդրման կարիքների մոնիթորինգ, կմշակվի համակարգի ներդրման միջոցառումների ծրագիր և կհաշվարկվեն դրա իրականացման համար պահանջվող ծախսերը:<br>2. Մոնիթորինգի արդյունքները, միջոցառումների ծրագրերը և ծախսերի հաշվարկը կտրամադրվեն ձեռնարկություններին՝ միջոցառումներն իրականացնելու և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարին ներկայացնելու համար: |
| 3. | ՀՀ գյուղատնտեսության նախարարին սույն ծրագրի 2-րդ կետում նշված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվե-տվությունների ներկայացում | մինչև 2011թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ՝ պարբերաբար | ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն | Աշխատանքային խումբը յուրաքանչյուր ընկերությունում կատարված աշխատանքների ավարտին հաջորդող 3 օրվա ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարին ներկայացնելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետին կներկայացնի հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ: |
| 4. | Ձկնաբուծական մթերքների արտադրության ձեռնարկություններում ՎԱՎԿԿՀ (HACCP) համակարգի ներդրման քաղաքականության և ծախսատարության ներկայացում ՀՀ վարչապետին | մինչև 2011թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | Սույն ծրագրի 2-րդ կետի միջոցառման ամբողջական արդյունքների հիման վրա ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը կմշակի և ՀՀ վարչապետին կներկայացնի ձկնաբուծական մթերքների արտադրության ոլորտում ՎԱՎԿԿՀ (HACCP) համակարգի ներդրման քաղաքականությունն ու ծախսատարությունը: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ